



ԱՆՁՆԱՍԵՐ ԾԱՌՆ ՈՒ ՓԵԹԱԿԸ

Օր մը մեղուներու խումբ մը եւ իր թագուհին անտառ մը կը գտնեն եւ կ'որոշեն այստեղ բնակութիւն հաստատել: Մեղուներու թագուհին աչքին անմիջապէս կը փայլի ցօցուն եւ շատ խիտ տերեւներով ծառ մը: Այդ վայրկեանին իսկ ան կ'որոշէ այդ ծառին մէջ իր փեթակը շինել:

Խիտ տերեւներով ծառին մօտենալով, թագուհին ծառին հետ կը խօսի ու կ'ըսէ. «Մենք նոր հասած ենք այս անտառը: Կրնա՞ք թոյլ տալ մեզի՝ ձեր ճիւղերէն մէկուն վրայ հանգչիլ եւ մեր սեփական փեթակը կազմել»:

Ծառը լսելով թագուհի մեղունին՝ պատասխանեց. «Ես չեմ սիրեր, որ որեւէ բան տերեւներուս եւ ճիւղերուս վրայ թառի: Գացէ՛ք ուրիշ ծառ մը գտէ՛ք եւ այդտեղ կազմեցէ՛ք ձեր բոյնը: Ես ձեզի թոյլ չեմ տար այստեղ բնակիլ»:

Նոնենին լսելով այս խօսակցութիւնը ծառին ըսաւ. «Եղբայր, դուն բաւական տեղ կրնաս յատկացնել, ինչպէս որ մենք՝ անտառին բոլոր ծառերը կ'ընենք»: Այս մէկը լսելով խիտ տերեւներով ծառը պատասխանեց. «Եթէ այդքան մտահոգ ես, ինչո՞ւ թոյլ չես տար որ ճիւղերդ ըլլան անոնց ապաստան»:

Լսելով խիտ տերեւներով ծառին կոշտ ու կոպիտ պատասխանը, խնձորենին ըսաւ. «Սիրելի՛ մեղուներ, դուք մեր քոյրերն ու եղբայրներն էք: Եկէ՛ք, ես ձեզի իմ ճիւղերէն մէկը կը տրամադրեմ կազմելու ձեր սեփական փեթակը»:

Թագուհին եւ մեղուները տասնեակ անգամներ շնորհակալութիւն յայտնելով խնձորենին, մտան անոր ճիւղերուն մէջ եւ ստեղծեցին իրենց փեթակը:

Օր մը, երկու ատաղձագործ կ'անցնէին նոյն անտառին մէջէն, կը փնտռէին լաւագոյն ծառը արմատախիլ ընելու եւ օգտագործելու անոր ճիւղերը: Անոնք տեսնելով խնձորենին կանգ առին մտածելով, որ այսպիսի կոճղ ունեցող ծառ մը շուկային մէջ վաճառելու պարագային, անոնք կը ստանան տրամադրուած գինին կրկնապատիկը: Սակայն ատաղձագործներէն մէկը նկատելով մեղուներուն փեթակը ըսաւ. «Այս ծառը մեղուի փեթակ ունի: Եթէ փորձուիք զայն կտրել, մեղուները մեզ չեն խնայեր: Եկո՛ւր ուրիշ ծառ մը գտնենք»: Անոնք տեսան խիտ տերեւներով ծառը եւ մտածեցին զայն կտրել, որովհետեւ անոր կոճղը աւելի հաստ էր եւ կարելի էր իրմէ առաւել օգուտ քաղել: Երկու ատաղձագործները կացինը իրենց ձեռքը առած սկսան կտրել խիտ տերեւներով ծառը, որ անդադար ցաւէն կու լար ու կը գոռար: Խնձորենին լսելով անոր լացը, ձայն տուաւ մեղուներու թագուհին եւ խնդրեց իրմէ անմիջապէս փրկել խիտ տերեւներով ծառը: «Մենք պէտք է օգնենք իրարու: Խիտ տերեւներով ծառը մեր օգնութեան կարիքը ունի եւ մենք պէտք է հասնինք անոր»:

-Եկէ՛ք երթանք եւ մեր կարելին ընենք,- հրամայեց մեղուներու թագուհին: Բոլոր մեղուները միասնաբար թռան դէպի խիտ տերեւներով ծառը եւ սկսան խայթել ատաղձագործները:

-Ուրկէ՞ եկան այս մեղուները: Մենք վերջին անգամ գիրենք տեսանք խնձորենին վրայ: Անոնք ինչպէ՞ս այստեղ հասան,- բացազանչեց առաջին ատաղձագործը:

-Խօսելու ժամանակ չկայ, պէտք է փախչինք, այլապէս մեր կեանքին վտանգ կը սպառնայ,- առաջարկեց երկրորդ ատաղձագործը:

Երկու ատաղձագործներն ալ արագօրէն փախան իրենց կեանքը փրկելու համար:

Այսպիսով՝ խիտ տերեւներով ծառը փրկուեցաւ: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց մեղուներուն իրենց լաւ գործին համար:

Մեղուներու թագուհին ըսաւ.

-Եթէ դուն իսկապէս կ'ուզես շնորհակալութիւն յայտնել, նախ պէտք է յայտնես զայն խնձորենին: Ինք էր, որ մեզ ոգեշնչեց օգնութեան հասնելու քեզի: Ծիշդ չէ վատ բաներով փոխադարձել անոնց, որոնք մեզի վնաս հասցուցած են:


Այս խօսքերը լսելով, խիտ տերեւներով ծառը հասկցաւ իր սխալը եւ ներողութիւն խնդրեց մեղուներէն եւ խընձորենին: Անոնք ներեցին զինք եւ դարձեալ ընկերացան անոր:

Այս պատմութիւնը մեզի կը սորվեցնէ միշտ օգնել ուրիշներուն եւ բնաւ ոխ չպահել մեզի հանդէպ սխալող անձերուն նկատմամբ:



ԹԻՒՄ ՊԱՏՐԱՍՏԵՑՈՒՄ՝ ՄԱՐՄՈՒՆԻ ԱՇԽԱՏԱՆ-ՇՆՆԱՆԻՆԻ, ՆԿԱՐԱՍԱՐՈՒՅՈՒՄ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՐՈՇԵՆՆԻ

ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՄԻՋԱՏՆԵՐ



Թիթեռնիկները միջատներուն ամենէն գեղեցիկներն են: Անոնք այլ միջատներէն կը զատորոշուին իրենց թելերով, որոնք զարդարուած են գոյնզգոյն փոշիով, ինչ որ իրենց կու տայ նրբագէղ տեսք մը:

Մեղունները, իշամեղունները եւ մրջիւնները միջատներ են, որոնք կ'ապրին իրենց կազմակերպած ընկերային կառոյցներով:

ՄԵՏԱԶԵՍ

Ինչպէս սարդերը կ'արտադրեն իրենց ոստայնի թելերը, նոյնպէս ալ շերամը կ'արտադրէ իր մետաքսեայ թելերը, որոնք երբեմն կ'ունենան 1000 մեթր երկայնք:

Քակելու համար խոզակը, գայլ պետք է կակուղցնել տաք ջուրի մէջ դնելով:

ԳԱՐԹՈՂ ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐ

Թիթեռնիկի մեծ տեսակները երկարատեւ թռիչք կ'ունենան: Ամեն աշնան, անոնք կը գաղթեն հիւսիսային երկիրներէն դէպի հարաւ, ուր կ'անցընեն ձմրան եղանակը: Գարնան կը վերադառնան իրենց հայրենիքը:

ՍՖԻՆՔՍ

Սֆինքսը իր անունը առած է կռակի վրայ ունեցած գծագրութենէն:

ՂԵՂԻՆ ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐ

Կիտրոնի վառ դեղին գոյնով թիթեռնիկները, կարծեք, կ'ազդարարեն եւ կը զգուշացնեն. «Ուշադրութի՛ն, համեղ կեր մը չեմ»:

ԿԱՊՈՅՏ ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐ

Կապոյտ թիթեռնիկի թրթուռը քաղցր հեղուկ մը կ'արտադրէ:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՄԻՋԱՏՆԵՐ

Միջատներուն մեծամասնութիւնը առանձին կ'ապրի, մինչ ուրիշներ (մեղուն, պիծակը եւ մրջիւնը) կ'ապրին ընկերութեան մէջ: Իւրաքանչիւր համայնքի անդամներ միասնաբար կը գործեն ու կը պաշտպանեն իրենց համայնքը: Օրինակ՝ մեղունները կ'ապրին 50.000 բանուոր ունեցող համայնքով: Ամեն համայնք ունի իր թագուհին եւ արու մեղունները՝ սերնդագործումի եւ աճումի համար: Արու մեղուններուն կէտքը կարճատեւ կ'ըլլայ: Թագուհին է, որ կ'ածէ ձուիկներ: Էգ բանուորները կը հաւաքեն մեղրահիւթը եւ բեղմնափոշին, ջուր կը բերեն՝ կերակրելու եւ խնամելու նորածին ձագերը:

Չետելեալ թիւերը միացո՛ւր, ապա՝ ներկէ՛ կազմուած պատկերը:



2 □ 4 = 6	4 □ 4 = 8
9 □ 7 = 2	9 □ 3 = 6
3 □ 1 = 4	8 □ 1 = 7
3 □ 4 = 7	2 □ 3 = 5
7 □ 2 = 5	6 □ 4 = 2

Փորձէ՛ լուծել միայն + եւ - նշանները գործածելով:

ԾՈՅԼ ՄԱՐԴԸ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԾՐԱԳԻՐԸ

Ժամանակին շա՛տ ծոյլ մարդ մը կ'ապրեր: Այնքան ծոյլ, որ միշտ դիւրին միջոցներ կը փնտռեր օրուան հացը ապահովելու համար: Օր մըն ալ, երբ ան կերակուր կը փնտռեր, տեսաւ շա՛տ խոշոր այգի մը, որուն մէջ բազմաթիւ եւ տեսակաւոր համեղ պտուղներ կային: Ան դիտեց շուրջը եւ տեսաւ որ մարդ չկար: Յանկարծ որոշեց պտուղ մը գողնալ ու փախչիլ: Հագիւ թէ ան մօտեցաւ ծառի մը միրգը քաղելու, պարտիզպանը նկատեց զինք եւ սկսաւ հետապնդել զայն: Ծոյլը նկատեց, որ հողագործը փայտով կը մօտենայ իրեն: Ան սաստիկ վախցաւ եւ սկսաւ արագ-արագ վազել: Մինչ կը վազեր, նշմարեց ուրիշ անտառի մը մուտքը եւ այնտեղ պահուրդտելու մտաւ: Քանի մը ժամ ետք ան դուրս եկաւ անտառէն: Անտառէն քիչ մը անդին աղուէս մը տեսաւ: Անոր զարմանքը շատ մեծ եղաւ երբ նկատեց, որ աղուէսը միայն երկու ոտք ուներ եւ ուրախութեամբ աչ ու ձախ կը սողար: Ծոյլը մտածեց. *«Այս աղուէսը ինչպէ՞ս տակաւին ողջ է այսքան վատ վիճակի մէջ գտնուելով հանդերձ: Խեղճ աղուէսը ինչպէ՞ս պետք է կերակրէ ինքզինք կամ հերոս մնայ այլ անասուններու սպառնալիքներէն»:*

Յանկարծ առիծ մը տեսաւ, որ բերնին մէջ կտոր մը միս դրած, դէպի աղուէսը կը մօտենար:

Բոլոր կենդանիները տեսնելով առիծին մօտենալը, արագ-արագ սարսափահար աչ ու ձախ փախան: Իսկ ծոյլը իր քով գտնուող ծառը մազլցեցաւ, որ ինքզինք փրկէ, սակայն միայն աղուէսը անշարժ իր տեղը մնաց:

Բայց այդ վայրկեանին ինչ որ տեսաւ ծոյլ մարդը, իսկապէս զարմանալի էր: Առիծը բերնին մէջ պահած միսը ձգեց աղուէսին առջեւ: Ծոյլը տեսնելով Աստուծոյ կամքը, շատ ուրախացաւ, մտածելով որ Աստուած, միշտ բարի ծրագիրներ ունի իր ստեղծածները հոգալու: Ան կը կարծէր, որ Աստուած նոյնպէս զինք կերակրելու համար բան մը ծրագրած է: Այսպիսով, ան նստեցաւ ծառի մը տակ, սպասելով, որ իրեն եւս մէկը մօտենայ ու կերակրէ: Երկա՛ր ժամեր սպասեց իր ուտելիքը եւ երկու օր ամբողջովին անօթի մնաց:

Վերջապէս, չդիմանալով անօթութեան ու ծարաւին, հեռացաւ այդ անտառէն եւ որոշեց տուն

վերադառնալ: Ծամբուն վրայ հանդիպեցաւ ծեր իմաստունի

մը: Ծեր իմաստունը ճանչցուած էր իր

սրամտութեամբ. ծոյլը իմաստուն մարդուն պատմեց

ամեն ինչ, որոնց ականատես եղած էր: Իմաստունը նախ

կերակուր եւ շուր տուաւ անոր, ետքը հարցուց իմաստունին.

«Ա՛խ, իմաստուն, իմաստո՞ւն, Աստուած ինչո՞ւ իմ նկատմամբ

իր բարութիւնը ցոյց չտուաւ, ինչպէս որ ըրաւ հաշմանդամ

աղուէսին»: Ծեր իմաստունը ժպտաց եւ ըսաւ. *«Այդ ճիշդ է:*

Աստուած բոլորին համար ծրագիր ունի: Դուն անկասկած Աստուծոյ

ծրագիրէն մաս մըն ես: Այնուամենայնիւ, զաւա՛կս, դուն սխալ ձեւով

ընդունեցիր անոր նշանը: Աստուած չէր ուզէր, որ դուն աղուէսին պէս

ըլլայիր, այլ՝ կ'ուզէր որ առիծին պէս ըլլաս»:

Այս առակէն կը հասկնանք, դրական ձեւով դիտել մեր շրջապատը,

օգնել մեր չորս կողմը գտնուող կարօտեալներուն եւ ընտրել ճիշդ

որոշումը եւ ո՛չ թէ դիւրինը:



ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԸ

Երկիրը շրջապատուած է մթնոլորտով մը, որ բաղկացած է երկու կարելոր կազերէ՝ թթուածին եւ բորոկածին: Ան կը դառնայ արեւին շուրջ 365 օրերու եւ 6 ժամերու ընթացքին, որ տարուան մը տեւողութիւնն է: Անկէ դուրս Երկիրը կը դառնայ ինքն իր շուրջ 24 ժամերու ընթացքին՝ մէկ օրուան տեւողութեամբ:

ԵՐԿՐԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

4500 միլիոն տարիներ առաջ Երկիրը փոքրագոյն փոշիի հատիկ մըն էր կազային ամպի մը մէջ: Ապա, այդ նիւթը վերածուած է եռացած հեղուկ գունդի մը: Եռացած հեղուկին մակերեսը կը պաղի եւ կը կարծրանայ միլիոնաւոր տարիներու ընթացքին՝ կազմելով հողային կեղեւը:

ՑԱՄԱՔԱՄԱՍԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Այսօրուան եօթը ցամաքամասերը բնականին մէջ կը կազմէին միայն մէկ ամբողջութիւն: Մեծագոյն Ցամաքամասը կը կոչուի Փանկայա: Ժամանակի ընթացքին Փանկայան բաժնուած է բազմաթիւ փոքր ցամաքամասերու, որոնք հեռացած են իրարմէ: Կարելի է, որ Հարաւային Ամերիկայի արեւելեան ափը եւ Ափրիկէի արեւմտեան ափը իրարու ագուցել առեղծուածախաղի մը (puzzle) կտորներու պէս:

ԵՐԿՐԻՆ ԸՆԴԵՐՔԸ

Երկիրը կազմուած է ժայռային յաջորդական խաւերէ, նմանելով սոխի մը խաւերուն: Կեդրոնը գտնուող կորիզը կազմուած է հալած երկաթէ: Վերարկուն, տաք ժայռէ կազուն հաստ խաւ մըն է, որ կը շրջապատէ կորիզը: Մակերեսը կը կազմէ կարծր խաւ մը:

Ցամաքամասերուն կեղեւի հաստութիւնը 33 քմ. է, իսկ ովկիանոսներուն տակ՝ 6 քմ. է:

